ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

«___»_____ 201__թ. №_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ Մ. ԱՆԱՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 22.09.2017թ.

թիվ ԳԲԽ-ՄԱ/1/17111-17 գրության

Հարգելի պարոն Անանյան

Հայտնում եմ Ձեզ որ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ Գնումների բողոքարկման խորհրդի կողմից 22.09.2017թ. ընդունված ԳԲԽ-ԱՄ-2017/30 որոշումից հետո ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ընթացակարգը կասեցված չափաբաժինների մասով վերսկսել է հայտերի վերագնահատումով՝ հաշվի առնելով գնումների բողոքարկման խորհրդի որոշման իրավապարտադիր լինելը:

Կից Ձեզ եմ ներկայացնում ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կասեցված նիստի վերսկսման արձանագրության պատճենը:

Առդիր՝ 3 թերթ:

Հարգանքով՝

ԳԱԳԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝ Ֆինանսատնտեսագիտական վարչություն
Փորձագետ, Հրաչյա Գալստյան
Հեռ՝. 012 31 78 68

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՀՀ ԱԻՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՂԵԿԱՎԱՐ՝

Գ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

«25» «09» 2017 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ 3-ՐԴ ԵՎ 9-ՐԴ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՎԵՐՍԿՍՄԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան «25» «09» 2017 թ.

ժամը 15 :30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու

Վահագն Օհանյան՝ ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ

Անդամներ՝ ԳՊ/ԳԱ - գնահատող անձնակազմ

Վարդան Հայրապետյան՝ ՀՀ ԱԻՆ աշխատակազմի փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պետի տեղակալ, փ/ծ գնդապետ

Անդամներ՝ ԳՊ/ԲԱ - բացող անձնակազմ

Լուսինե Հովհաննիսյան՝ ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ

Արշակ Վարդանյան՝ ՀՀ ԱԻՆ աշխատակազմի փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պետ, փ/ծ գնդապետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Հ. Գալստյան՝ ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության փորձագետ

Հանձնաժողովի նիստին ներկա էր նաև ՀՀ ԱԻ նախարարի օգնական **Վ. Մարտիրոսյանը**

Հանձնաժողովի նիստին բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ **Դ. Բենգլյանը**

1. 2017թ. սեպտեմբերի 4-ին N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակից <<Մեյդ թու Մեյք>> ՍՊԸ կողմից բողոք էր ներկայացվել Հայաստանի Հանրապետության Գնումների բողոքարկման խորհուրդ՝ N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ընդունած որոշումների վերաբերյալ:

1.1 Գնումների մասին ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի համաձայն գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը:

ԿՈՂՄ՝ 4 ԴԵՄ՝ 0

2. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գնումների բողոքարկման խորհրդի 22. 09. 2017թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/30 որոշումը /հրապարակված 23.09.2017թ./, որը համաձայն Գնումների

մասին ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի իրավապարտադիր է, N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց.

2.1 Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի չեղարկել N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.08.2017թ. նիստի թիվ 4 արձանագրության 6.1.3 կետով հաստատված որոշումը.

ԿՈՂՄ՝ 4 ԴԵՄ՝ 0

2.2 N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 3-րդ և 9-րդ չափաբաժիններով վերագնահատել N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով ընթացակարգի մասնակիցների հայտերը:

ԿՈՂՄ՝ 4 ԴԵՄ՝ 0

2.3 Մերժել ‹‹ԱԲԻ›› ՍՊԸ կողմից ներկայացված հայտը համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի՝ ‹‹Գնումների գործընթացի կազմակերպման›› կարգի /այսուհետ Կարգ/ 32-րդ կետի 12-րդ ենթակետի, 40-րդ կետի 4-րդ ենթակետի և 41-րդ կետի , ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 8-րդ կետի 8.2 և 8.19 ենթակետերի:

ԿՈՂՄ՝ 4 ԴԵՄ՝ 0

2.4 Մերժել ‹‹Մեյդ թու Մեյք›› ՍՊԸ կողմից ներկայացված հայտը համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի, 40-րդ կետի 4-րդ ենթակետի և 41-րդ կետի, ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 8-րդ կետի 8.2 և ՄԱՍ 2-ի 2-րդ կետի 2.9 ենթակետի, քանի որ‹‹Մեյդ թու Մեյք›› ՍՊԸ կողմից ներկայացված հայտի գնային առաջարկում մասնակցի կողմից պայմանագրի կատարման համար առաջարկված ընդհանուր գումարը լրացված է միայն թվերով և տառերով լրացված չէ, հետևաբար հիմք չի կարող ընդունվել գնահատող հանձնաժողովի կողմից՝ համաձայն Կարգի 40-րդ կետի 3-րդ ենթակետի:

ԿՈՂՄ՝ 4 ԴԵՄ՝ 0

3. N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 3-րդ և 9-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ԱԹԵՆԱՍ ԵՎ ԱՐԵՍ» ՍՊԸ-ին:

ԿՈՂՄ՝ 4 ԴԵՄ՝ 0

4. Համաձայն Որոշման 43-րդ կետի 4-րդ ենթակետի ծանուցել առաջին տեղ զբաղեցնող մասնակցին՝ գնահատման նպատակով մինչև **29.09.2017թ.** ներառյալ, Պատվիրատուի mes.gnumner@mail.ru էլեկտրոնային փոստին ուղարկել սույն ընթացակարգի հրավերի 6-րդ հավելվածը, որին կցվում է.

4.1 առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը /հրավերի 6.1-րդ հավելվածը/.

4.2 նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ընդ որում՝ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

5. Ն ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով գնանշման հարցման էլեկտրոնային ձևով ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել կայացնել Որոշման 46-րդ կետով սահմանված ժամկետում:

Կողմ՝ 5 Դեմ՝ 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու

Վ. Օհանյան

Անդամներ ՝ ԳՊ/ԳԱ գնահատող անձնակազմ

Վ. Հայրապետյան

Անդամներ ՝ ԳՊ/ԲԱ –բացող անձնակազմ

Լ. Հովհաննիսյան

Ա. Վարդանյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Հ. Գալստյան

ԱԻ նախարարի օգնական

Վ. Մարտիրոսյան